

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի հողաշինության և հողօգտագործման բաժնի մարզային հողային պետական տեսչության կողմի 2018 թվականի կատարված աշխատանքների մասին

Հաշվետու ժամանակաշրջանում կազմվել է մարզի հողային հաշվեկշիռը, ըստ որի մարզի վարչական տարածքը կազմում է 2310133.0 հա, որից գյուղ. նշանակության հողեր՝ 189607.4 հա, այդ թվում վարելահող՝ 15628.3 հա, բազմամյա տնկարքեր՝ 1904.4 հա, խոտհարքեր՝ 5060.4 հա, արոտ՝ 92452.0 հա, այլ հողատեսքեր 74562.0հա: Մարզում ոռոգվող հողերը ընդամենը կազմում են 6622.9 հա:

Միջգերատեսչական հանձնաժողովին է ներկայացվել համայնքների վարչական սահմաններում գտնվող հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաներում փոփոխություններ կատարելու 21 առաջարկություններ, որից 13-ին միջգերատեսչական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն՝ հողերի նպատակային նշանակությունը փոխելու վերաբերյալ, որոնք սահմանված կարգով փոխանցվել են համապատասխան համայնքներ, մնացած 8-ը ընթացքի մեջ են:

ՀՀ կառավարության հունվարի 14-ի 2010 թվականի թիվ 16-Ն որոշմամբ հաստատված 4-րդ կետի պահանջներին համապատասխան՝ 4 հողամասերի օտարմա առաջարկություն է ներկայացվել ՀՀՏԿ և զարգացման նախարարություն, 2 օտարման վերաբերյալ տրվել է դրական եզրակացություն, իսկ մնացածը քննարկման փուլում են:

Համաձայն ՀՀ կառավարության 17.09.2009թ. թիվ 1066-Ն որոշմամբ Արենի, Խաչիկ, Գլաձոր, Ռինդի, Աղավնաձորի, Արտաբույնք, Ջերմուկի / Գնդեվազ/ և Զառիթափի / Սարավան / համայնքներում բաժնի հետևողական աշխատանքների արդյունքում կատարվել են համայնքային և քաղաքացիների սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողատեսքերի փոփոխություն՝ ցածրաժեքից՝ բարձրաժեքի՝ փոփոխության են ներկայացվել 146.738 հա, որից փոփոխվել է խաղողի այգի 18.5 հա, պտղատու այգի 128.238 հա, որն էլ արտացոլվել է 2018 թվականի մարզի հողային հաշվեկշռում:

- ՀՀ հողային օրենսգրքի 42-րդ հոդվածի համաձայն, մարզպետի կարգադրությամբ տեսչական ստուգումներ են կատարվել մարզի 3 (18 բնակավայրում) համայնքներում:

Ուսումնասիրությունների արդյունքում մի շարք համայնքներում հայտնաբերվել են հետևյալ թերությունները՝ օտարվող հողամասերի չափերը պակաս են եղել նվազագույն չափերից, օտարման արձանագրությունները և կնքված պայմանագրերը կազմվել են ոչ ճիշտ, որոնք ժամանակին չեն ներկայացվել պետական գրանցման: Մարզպետի մոտ քննարկման ժամանակ համապատասխան համայնքների ղեկավարներին առաջարկվել է կարճ ժամկետում նշված թերությունները վերացնել:

Համայնքների կողմից հողերի օտարման և վարձակալությամբ տրամադրման աշխատանքները իրականացվել են՝ ՀՀ հողային օրենսգրքի պահանջներին համապատասխան:

Համայնքների վարչական սահմաններում գտնվող գյուղատնտեսական նշանակության հողերից օտարվել է 94.3295 հա, որի ընդհանուր գումարը կազմում է 61488.59 հազ դրամ:

Տարի	Վարձակալվող հողատարածք հա	Պայմանագրերի քանակը	Հաշվարկվել է վարձավճար հազ. դրամ	Գանձվել է հազ. դրամ	Տոկոս
2018	28739.5	1475	34615.2	35469.2	102.5
2017	24484.46	1441	32993.0	33174.5	100.5

Մարզի հողերի օգտագործման մակարդակը դեռևս բավարար չէ, որի հիմնական պատճառներն են.

- վարելահողերի 75 % -ը անջրդի են,
- հողերի բնական ցածր բերրիություն,
- բնակավայրերից հեռու գտնվելը:

Քաղաքացիների կողմից ստացել ենք 34 դիմումներ, որոնք ուսումնասիրվել և սահմանված կարգով պատասխանվել է:

Հողաշինության և հողօգտագործման բաժնի- մարզային հողային պետական տեսչության պետ՝
Մ. Մեսրոպյան

10.01.2019